Արձանագրություն N 2

«Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար դեղորայքի և բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/40» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

10-13 դեկտեմբերի 2021թ.
Ժամը 11:30-ժամը13:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Հակոբյան

Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Պողոսյան

Ն. Լալայան

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Գրիգորյան

Օրակարգ

1. **Գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի հրավերով հայտ ներկայացրած մասնակիցների մասին**
2. **Գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի հայտի բացումը**
3. **Հանձնաժողովի որոշումների մասին**

1. **<u>Գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի հրավերով հայտ ներկայացրած մասնակիցների մասին</u>**

1.1. Ընդունել ի գիտություն, որ.

ա) Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել.

1.«Վագա Ֆարմ»ՍՊԸ	ք. Երևան,Ֆիզկուլտուրնիկներ 8,010739930
2.«Զայնա Մոլլ» ՍՊԸ	ք. Երևան, Հալաբյան 65/9,055955666
3.«Մարգ-Ֆարմացիա»	ք. Երևան,Դրոյի 15,095246449

<u>2. Գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի հայտի բացումը</u>

2.1 Ընդունել ի գիտություն, որ.

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին՝ բացառությամբ «Զայնա Մոլլ» ՍՊԸ-ի. 12-րդ չափաբաժնի անվանումն ու տեխնիկական բնութագիրը չեն համապատասխանում, «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի 21-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում չափաբաժնի անվանմանը, 26-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը ոչ լիարժեք է, 21-րդ

բաժնի համար բացակայում է «Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ներմուծման, մատակարարման կամ մեծածախ առևտրի լիցենզիա»:

2.2 Ընթացակարգի մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները հետևյալն են՝

/ՀՀ դրամ/

Չ/Հ	Ապրանքի անվանումը	«Վագա Ֆարմ» ՍՊԸ		Ընդհանուր գինը
		Գինն՝ առանց ԱԱՀ	ԱԱՀ	
21	քլորպրոմազին n05aa01	148000	29600	177600
25	բժշկական այլ գործիքներ	172000		172000
26	բժշկական այլ գործիքներ	210000		210000

/ՀՀ դրամ/

Չ/Հ	Ապրանքի անվանումը	«Չայնա Մոլլ» ՍՊԸ		Ընդհանուր գինը
		Գինն՝ առանց ԱԱՀ	ԱԱՀ	
1	ներարկման ինսուլին (լուծվող) a10ab	250000	50000	300000
4	բենզաթին բենզիլ–պենիցիլին j01ce08	4450	890	5340
5	նիտրոֆուրանտոյին j01xe01	9000	1800	10800
12	գլյուկոզամին (գլյուկոզամինիսուլֆատ), քոնդրոիտինիսուլֆատ, իբուպրոֆեն – M09AX	58800	11760	70560
17	տրոքսերուտին C05CA04	15200	3040	18240
22	տենոֆովիր դիսոպրոքսիլ ֆումարատ j05af07	660240	132048	792288
25	բժշկական այլ գործիքներ	193500	38700	232200
26	բժշկական այլ գործիքներ	174000	34800	208800

/ՀՀ դրամ/

Չ/Հ	Ապրանքի անվանումը	«Մարգ- Ֆարմացիա» ՍՊԸ		Ընդհանուր գինը
		Գինն՝ առանց ԱԱՀ	ԱԱՀ	
25	բժշկական այլ գործիքներ	516000		516000

2.3 «ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/40» ծածկագրով ընթացակարգի 2,3,6,7,8,9,10,11,13,14,15,16,18,19,20,23,24 չափաբաժինների մասով հայտեր չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3.Հանձնաժողովի որոշումների մասին

3.1 Որոշվեց՝

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 41-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը,

էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակիցներին ՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

3.2 Հաշվի առնելով, որ «Չայնա Մոլլ » ՍՊԸ-ի 5,17, 22 չափաբաժինների, «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի 21-րդ չափաբաժնի (շտկման դեպքում) համար ներկայացրած բարձր գնային առաջարկները, հանձնաժողովը որոշեց մասնակիցներին էլեկտրոնային եղանակով ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին: Բանակցությունները տեղի կունենան 13 դեկտեմբերի 2021թ. ժամը 13:00-ին Կոմիտաս 54 բ հասցեում:

3. 3 «ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/40» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստը շարունակել 13 դեկտեմբերի 2021թ. ժամը 13:00-ին Կոմիտաս 54 բ հասցեում:

Հանձնաժողովն արձանագրեց,որ սահմանված ժամկետում հայտերի շտկում ներկայացրեց «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն 21 և 26-րդ չափաբաժինների համար: Նոր առաջարկներ չեն ներկայացվել:

3.4 Հաշվի առնելով նիստի արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց.
«ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/40» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղացրած ճանաչել հետևյալ մասնակիցներին՝ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին 25-րդ, «Չայնա Մոլլ» ՍՊԸ-ին 1,4,26 –րդ չափաբաժինների համար:
3.5 «ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/40» ծածկագրով գնման ընթացակարգի չկայացած չափաբաժիններ համարել 2,3,6,7,8,9,10,11,13,14,15,16,18,19,20,23,24:
3.6 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ հաստատել պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ:
Անգործության ժամկետը սահմանվում է 5 օրացուցային օր:
3.7 Անգործության ժամկետի ավարտին հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակիցներին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա.Հակոբյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Դ. Պողոսյան

_____ Ն. Լալայան

Քարտուղար՝ _____ Մ. Գրիգորյան